

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԵՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է առնա լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Ե Ֆ Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հին հարցերից մէկը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն.

ՀԻՆ ՀԱՐՑԵՐԻՑ ՄԵԿԸ

Մեր պարբերական մամուլը շատ անգամ պետեղել է յօդուածներ և թղթակցութիւններ մեր գիւղական քահանաների հոգային ապահովութեան խնդրի մասին: Այդ խնդիրը մեր գիւղական կեանքում նշանաւոր տեղ է բռնում և շատ անգամ առիթ է եղել սուր ընդհարումների և խռովութիւնների: Գիւղական համայնքը պարտաւոր է ապահովել իր քահանաներին և պէտք է միջոցներ որոնէ նրանց ապահովութեան համար: Այդ ճիշդ է: Սակայն հարց է ծագում ինչպէս պէտք է կարգադրել այդ ապահովութեան գործը, որ նա չը խանգարէ գիւղական համայնքի միւս շահերին և ստանայ կանոնաւոր կազմակերպութիւն:

Ներկայ 1900 թվի մայիսի 1-ին, ինչպէս յայտնի է, Բարձրագոյն հաստատութիւն ստացաւ Անդրկովկասի գիւղերի հոգային բարեկարգութեան Ժրգիրը: Եւ այժմ մի յատուկ յանձնաժողով թիֆլիսում մշակում է այն հրահանգները, որոնցով պէտք է ղեկավարվեն Բարձրագոյն հրամանը կատարած ոչ պաշտօնականները: Յանձնաժողովը ուսումնասիրում է բոլոր այն դէպքերը, որոնք կարող են առաջ գալ հոգային բարեկարգութեան միջոցին:

Անկասկած, այդ դէպքերի շրջանում նշանաւոր տեղ են բռնում քահանաների հոգային ապահովութեան խնդրի զանազան տեսակ արտայայտութիւնները կեանքի մէջ: Սակայն մեր հոգեւոր վարչութիւնը մինչև այժմ ոչ մի լուրջ ուսումնասիրութիւն չը կատարեց այդ ապահովումը և չառաջարկեց իր կողմից լուրջ և ուսանելի նիւթեր օրէնսդրական շրջաններին:

«Արարատ» ամսագրի վերջին համարում ղեկավարած է գիւղական հոգեւորականու-

թեան հոգային հարկի մասին մի փոքր յօդուած, որ լինելով հետաքրքրական, այնուամենայնիւ չէ պարունակում հարուստ նիւթ մեր գիւղական ներկայ կեանքից: Գործնական կեանքի դէպքերը շատ բազմաթիւ են և նրանց քննութիւնը առաջ կը բերէր մի շարք հարցեր, որոնք կարող էին ապագայում մշակման ենթարկվել մասնագետ և հմուտ մարդկանցից կազմված յանձնաժողովներում:

Մեր հոգեւոր իշխանութիւնը կարող է այդ տեսակ նիւթ պատրաստել և նա պարտաւոր է այդ անել, որպէս զի հեշտացնելով օրէնսդրական շրջանների գործունէութիւնը, առաջն առնի թերութիւնները և անկատարելութիւնները: Մենք միշտ գանգատվել գիտենք, իսկ գործին օգնել, նիւթեր մատակարարել չը գիտենք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Միշտ մի եւ նոյնը ուսանողութեան մասին—գանգատ, դժգոհութիւն, մեղադրանքներ... Իւրաքանչիւր օր նոր փաստեր են լոյս ընկնում, բայց բոլոր փաստերը մի եւ նոյնն են հաստատում, այն, որ ուսանողութիւնը ընկնում է, որ հասարակութիւնը նրա ներկայ դրութիւնից ուրախալի եղբակցութիւնների անկողն ոչ մի հիւսիս չունի: «Наша жизнь» շաբաթաթերթի ախտաւոր Պետերբուրգի կենտրոնում տեսել է մի մագաղին, որի ձախտին կայքում է մի պարտի անսովոր ցուցանագիր: «Ընկերութիւն ուսանողների Բուդպէսի, Սապոնիի եւ ընկ.» Դա նախկին ուսանողների խանութ չէ, այլ ներկայ, դեռ ուսում չարժանալող ուսանողներ: Առեւտուր անում են ուսանողները: Խանութպանութիւնը ուսանողական կեանքը է-ժանաջնեղութիւն և ուսանողներից ապրուստի միջոց հայթայթելու նպատակ, ունի, այնպիսի միջոց, որ աւելի լաւ լինի, քան դասեր տալը: Այդ առիթով շաբաթաթերթի ախտաւորիցը գրում է.

Ըստ երեւոյթին, վատ բան չը կայ, բայց եւ այնպէս, մի ինչ-որ անախտ բան է զգացվում այս ձեռնարկութեան մէջ: Թուում է, որ դա ուսանողական բան չէ, գոյութիւն

պահպանելու մի ոչ-ուսանողական միջոց է: Ծախողի տեղում կանգնել, ի հարկէ, աւելի շահաւէտ է, բայց «աւելի շահաւէտ» խօսքերը բոլորովին ուսանողական խօսքեր չեն: Արտագրութիւններ անելը, թարգմանութիւններ անելը պարագլուխ անկասկած յաճախ շատ յիմար պարագլուխներ են, բայց ենթադրվում էր, որ դրանցով ուսանողը, այնուամենայնիւ, ծառայում է իր թիւնին, որ ուսանողը չի արտագրի պատկերներ կամ չի թարգմանի անվայել վէպեր: Ուսանողութիւնը դեռ մի քանի տարի առաջ, «մինչև» համազգեստ հագնելը», մի տեսակ մասամբ անպետական, մասամբ արեղայական կարգ էր, մի պատասխանատու կոչում, որ բարձր բարոյական պահանջներ ունէր: Դեռ անմօրուս, նոր գիմնազիան վերջացրած աշակերտներ էին նրանք, բայց իրանց «նուիրում էին» գիտութեան եւ աշխատում էին այնպէս տրամադրել իրանց, թէ անպատճառ արտաւար են նուիրվել գիտութեան: Դասեր, արտագրութիւն, թարգմանութիւններ—այս ամենը ծառայում էր իրեն իմացածի, անցածի կրկնութիւն: Այն ժամանակ «ուսանող» երիտասարդութեան մասին կար այն բոսանտական հասկացողութիւնը, թէ պրանք մարդիկ են, որոնք ճշմարտութիւն են որոնում եւ մտնում են նրան հին, զառանգալ աշխարհի մէջ: Անկասկած, այդտեղ շատ կար անգիտակցական ցուցանիշներ, անվիճելի է եւ այն, որ ուսանողների ինչ տաճարային մասը գնում էր համալսարան, չունենալով գիտական կոչման նոյն իսկ ստուկերը, բայց ամենքը յարում էին ճշմարտութիւնը եւ այդ յարգանքը, իմ կարծիքով, ծառայութիւն էր, որ մատուցվում էր հասարակութեան: Այժմ ուսանողական ակտիւնքը ընկել է: Գիտութեան նայում են առանց այլ եւ այլութեան, ինչպէս դիպում ստանալու, կարիքաւ ստեղծելու մի միջոցի: Նմանութիւն են գլխաւորականներին եւ դեռ նրանցից էլ հեռու են գրում: Գոնէ գլխաւորականներին եւ երբեք չեն տեսել Նիվսի պրոսպեկտի վրա հարած, իսկ հարած ուսանողների հանդիպում եւ համարեա միշտ, երբ ուշ երեկոյան վերադառնում են տուն:

Բայց ամենից պրծալիս փաստը, մեր կարծիքով, այն է, որի առիթով գրված է յօդուածը, խանութպան ուսանող—բաւական չէ այսքան էլ, որպէս զի իմանալով թէ ինչ էր ուսանողը առաջ եւ ինչ է այժմ, ղեկավարութեան եւ նիւթապաշտութեան մեր օրերում...

ԳԻ ՄՈՒՆՈՐ ԳՈՐԾԸ

Բացառելով վերականգնութեան այդ բոլոր նշանները միայն պատահական երեւոյթներով, անհատների ջանքերով, ի հարկէ, չէ կարելի ինքը կեանքն էլ առաջ մղող հանգամանքներ էր ստանում: Հայ ազգը, իրեն Արեւելքի մահ-մեղակալ լուծի տակ ճնշված մի ժողովուրդ, պիտի ենթարկվէր նոր, անսովոր հոսանքներին, որոնք ծնվում էին քաղաքական հանգամանքներից: Մագում էր ազատութեան արշալոյսը, որ պիտի թարմացնէր ստրուկ ժողովուրդների արեւը, ջարդէր ստրկական յուսահատ գաղափարները, ներշնչէր այնպիսի հասկացողութիւններ, որոնք բարձրացնում են հոգին, աւելի գործունէացնում նրան, ստեղծագործական կրակ են հաղորդում նրան: Գրականութիւնը, իրեն ժողովրդի հոգու ու մտքի արտագրութիւն, թարմանում, կենսունակ է դառնում այն ժամանակ, երբ եռանդուն ու ոգեւորվել է ինքը, կեանքը, երբ նրա առջեւ բացվում են զեղեցիկ, յուսատու հեռանկարներ: Հայոց կեանքի մէջ մտած այդ նոր հոսանքին էլ մենք կը նուիրենք հետեւեալ գլուխը:

XIV

1453 թվականի մայիսի 29-ի լուսաբացը մի հանաւոր աղէտ էր ամբողջ քրիստոնէայ աշխարհի համար: Այդ ժամին օսմանեան թիւրքերը մտան Կ. Պոլիս: Դեռ արեւը չէր ծագել, երբ քաղաքի պարիսպների մօտ, ներսի կողմում, բացվեց այսպիսի տեսարան: Արաբական գեղեցիկ նժույգ հեծած մի տղամարդ մի բուռն քաշերի հետ յարձակվեց ներս խռովող թիւրքերի ահազին բազմութեան վրա, եւ սկսվեց կոտորած:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օր, նոյեմբերի 11-ին, հայոց հոգեւորականութիւնը ա. Նշան եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցեց եւ ծնկաչոք մաղթանք կատարեց Թագաւոր Կայսրի շուտափութ անողջութեան համար: Պատարագին էր թիֆլիսի առաջնորդ Սուրէնեան արքեպիսկոպոսը: Եկեղեցում ներկայ էին թիֆլիսի ներսիսեան դպրոցի ուսուցչական խումբը, աշակերտները եւ բազմաթիւ հասարակութիւն:

Թիֆլիսի վաճառականները, «НОВ. ОБОЗ.» լրագրի խօսքով, դիմեցին առեւտրի եւ մանուֆակտուրայի թիֆլիսի կոմիտէին՝ խնդրելով միջնորդել ներկայումս կովկասում գտնվող երկաթուղիների գլխաւոր տեսուչ ինժեներ Գորչակովի առաջ՝ ապրանքների ուղարկելու եւ ստանալու կարգը կանոնաւորելու մասին անդրկովկասեան երկաթուղու թիֆլիսի ապրանքային կայարանում:

Կիրակի, նոյեմբերի 12-ին կայացաւ եօթներորդ հայերէն հանրամատչելի ներկայացումը: Այս անգամ խաղում էին մեր յայտնի երգիչաւոր հանդուցեալ Պարոնեանի «Բաղդասար աղբարը»: Մասնակցողները դարձեալ սիրողներ էին, բայց պ.պ. Անդրանիկից եւ Միրզոյեանից:

«С.-Пет.-Вѣд.» լրագրից հաղորդում է, թէ թիւրքաց լրագրիչներում տպվեց մի անհաւատալի տեղեկութիւն այն բանի մասին, որ 30,000 ծուխեր կովկասեան մահմադականներից մի խնդրագիր ուղարկեցին սուլթանին, որով խնդրում են թող տալ իրանց գաղթել թիւրքիս:

Մօսկվայի լրագրիչները հաղորդում են, որ Ագնուականների ժողովարանում նոյեմբերի 5-ին վրացի ուսանողների կազմած երկույթը մեծ կենդանութեամբ անցաւ Կոնցերտից յետոյ սկսվեց լեզգիական պարեր: Եկատերինեան դահլիճը զարդարված էր բուսականութեամբ, իսկ արեւելեան գորգերով զարդարված կիսկնբուսում Անդրէյեւա, Լիլիան եւ Սէլիվանովա դերասանուհիները ծախում էին շաճապան դիմի, պտուղներ եւ ծաղիկներ: Պարերը, որոնցով վերջացաւ երեկոյթը, շարունակվեցին մինչև

րաժը: Ձին, վէրք ստանալով, ընկաւ, բայց ճիւղերը շարունակեց կուռն հետիոտն: Սակայն, օսմանեան հեղեղի դէմ կանգնել չէր կարելի: վերջապէս այդ անվեհեր տղամարդն էլ գետին փռվեց եւ մի կարճ միջոցում կորաւ դիակների կոյտի մէջ:

Դա կոստանդին XIII կայսրն էր: Տեսնելով որ ամեն ինչ կորած է եւ չը կամենալով մնալ կայսր առանց կայսրութեան, նա հերոսի մահ էր որոնում ենիչէներին արեւի տակ: Մեռաւ կայսրը եւ նրա հետ մեռաւ Բիւզանդիան, արեւելեան այն հագին պետութիւնը, որ մօտ հազար տարի գոյութիւն էր պահպանել Բօսֆորի չքնաղ ափերում, որ այնքան շրջնող փառք եւ վիթխարի արատներ էր ցոյց տուել աշխարհին...

Նոյն օրը Կ. Պոլսում հաստատվեց Բիւզանդիայի յաջորդը: Կէսօրին մօտ, արեւմտ մայրաքաղաքի դռներով մուտք գործեց երջանիկ յաղթողը: Մէհմեդ Երկրորդն էր դա, քսան երեք տարեկան մի հերոս, որի նախնիները այդ օրից 150—200 տարի առաջ Փոքր Ասիայի լեռներում թափառող մի աննշան խաչնարած ցեղի առաջնորդներն էին: Ո՞վ կարող էր կարծել թէ այդ վայրենիներից է վերապահված հաստատ իշխանութիւն հիմնել Եւրօպայի հաւաքաւորեկեան անկիւնում—մի բան, որ դարերից ի վեր չէր աղողվել Դարեհներին, Բսէրք-սէներին, ասասեան եւ արաբական աշխարհակալներին, արեւելուող Ալի-Ասլաններին, մինչև իսկ «Աստուծու պատուհաս» Ձինգիդ-խաններին: Մայիսեան այդ խոնաւ առաւօտը (դիւրեւ յորդ անձրեւ էր եկել) Մէհմեդ Երկրորդը սոսկ մի սպանութիւն չէր կատարում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Որքան տարբերութիւն դարի վերջի եւ սկզբի մէջ: Սկզբում արեւմտող, աւերակների ծխի մէջ կորած Հայաստանն է փռված մեր առջեւ: Կատարեալ վայրենացում, սարսափելի թանձր խաւար է տիրում աւերակների այդ կոյտի վրա: Բայց մահի եւ արտասուքների թագաւորութեան մէջ նկատելի են ոտքի կանգնելու, առաջնաւոր վանքերի վերաշինվում են, որքան հնարաւոր է, աւերակները մոտծում են եւ մոտաւոր աւերանքների մասին: Մեծ են այդ ջանքերը. խաւար հոսանքները այնպէս են բռնացել ամեն տեղ, որ ամբողջ կէս դար կենդանութեան նշոյններ չատ քիչ են երեւում: Լոյսը շատ նուազ ու երեւում է, իսկ գիշերը չափազանց երկար ու մեռելային:

Դարի երկրորդ կէսից իրականութիւնը մի քիչ մեղմանում է. ժողովուրդը հարստահարութիւնների է միայն ենթարկված, կեղեքվում է, բայց եւ այդպէս բնաջնջ չէ դառնում, ապրելը, շունչ քաշելը համեմատաբար հեշտ է: Դրա համեմատ էլ մոտաւոր գործն է սկսում կամաց-կամաց բարձրանալ անկման խորխորատից, այնպէս որ դարի սկզբում մի հասարակ այրբնարանից անգամ զուրկ հայր դարի վերջում ունենում է արդէն «Համատարած Աշխարհացոյց» նման չքեղ ու բարձր հրատարակութիւն:

Կոյեան: (Հ. n. շ.)

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.